



ԺԱՌԱՆԳԱՎՈՐԱՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՆՈՐ ՇԵՆՔԻ  
ՀԻՄՆԱՐԿԵՔԸ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ  
ՎԱՆՔՈՒՄ

Երուսաղեմի հայոց արդի Ժառանգավորաց վարժարանը շուրջ 120 տարվա պատմություն ունի: Ինչպես մեր հին վարդապետարաններն ու ընծայարանները, ինչպիսին էին ս. Էջմիածնի, Դվինի, Տաթևի, Գլաձորի, Հարանց վանքի, Աղթամարի, Սսի, Արմաշի դպրեվանքերը՝ որպես «բացեալ աղբիւրն գիտութեանն Աստուծոյ», Երուսաղեմի հայոց վանքի Ժառանգավորաց վարժարանն ու ընծայարանը տարիների ընթացքում կատարել են իրենց պատասխանատու և կարևոր դերը ս. Տեղյաց ծառայության և հայ եկեղեցու հոգևոր սպասին կոչված արժանավոր և հավատավոր հոգևորականների պատրաստության գործում, ինչպես անցյալում, նաև մեր օրերին, 1921 թվականից սկսած, լուսահոգի տ. Եղիշե Դուրյան և տ. Թորգոմ Գուշակյան և մյուս պատրիարքների օրով:

Ուրախ ենք արձանագրելու, որ այսօր ս. Հակոբյանց վանքն ու Ժառանգավորաց վարժարանը, ամեն տ. Եղիշե սրբազան պատրիարքի գահակալության տարիներին, շարունակում է կատարել իր հոգևոր-առաքելական, եկեղեցական, մշակութային գործունեությունը՝ ի փառս հայ եկեղեցու, ինչպես նշել է Վեհափառ Հայրապետը, 1962 թվականի ապրիլ 20 թվակիր գրած իր սրբատառ կոնդակում, որ «Քրիստոսատես սուրբ Էջմիածնի կողքին» Երուսաղեմի հայոց պատրիարքական Աթոռը «կհանդիսանա հայ եկեղեցիին և հայ ժողովուրդին հոգևոր-իմացական կայսրության պյուներեն մին»:

Երուսաղեմը բացառիկ հանգամանք է ներկայացնում քրիստոնեական ողջ աշխարհի համար՝ որպես Քրիստոսի երկրավոր կյանքի հիշատակներով նվիրագործված սուրբ երկիր:

Երուսաղեմում քրիստոնեական առաջին սրբավայրերի շինության և



ՊՐՆ. ԱԼԵՔՍ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ ԵՐՈՒՍԱԳԵՄԻ ՀԱՅՈՑ Ս. ՀԱԿՈԲՅԱՆՑ ՏԱԺԱՐՈՒՄ, Ս. ԳԼՍԱԳՐԻ  
ՄԱՏՐԱՆ ՄԵՋ, ԻՐ ՈՒՍՏՆ ՈՒ ԱՂՈԹՔԸ ԿԱՏԱՐԵԼՈՒՑ ՀԵՏՈ

պահպանության հետ պատմականորեն կապված է եղել նաև հայ ժողովրդի անունը: Ըստ է դարի պատմիչներ Հերապոլսեցի Անաստաս վարդապետի և Մովսես Կաղանկատվացու վկայության, սուրբ երկրում առաջին հայ վանքերի և կրթական հաստատությունների շինությունը բարձրանում է մինչև ս. Գրիգոր Լուսավորչի և Տրդատ Գ թագավորի օրերը:



Տ. Եղիշե սրբազան պատրիարքը և պրն. Ալեքս Մանուկյանը Ժառանգավորաց վարժարանի շենքի մակետի մոտ

Այդ պատմական սրբավայրերի, կրթական, հոգևոր հաստատությունների շինությանը մասնակցել են հայրապետն ու թագավորը, հայ նախարարն ու շինականը, հայ արվեստագետն ու բարեպաշտ հայ մարդը, «ի փրկութիւն հոգոց իրեանց և ծնողաց իրեանց և ի յիշատակ ազգիս հայոց»:

Եվ այսօր, ահա, անցյալի մեր հայ թագավորների, նախարարների կողքին մեր նոր իշխանները՝ ազգային բարերարները, որոնք նույն սիրով, հավատով և երկյուղած բարեպաշտությամբ իրենց իշխանական նվիրատվությամբ, Հայոց Հայրապետի թելադրանքով ուզում են պայծառ ու կանգուն պահել հոգևոր-համազգային այս մեծ հաստատությունը, որ ս. Հակոբյանց վանքն է, իրենց նյութական նվիրատվությամբ և բարոյական աջակցությամբ:

**Ապրիլի 21-ին** Երուսաղեմի հայոց վանքում, հին քաղաքի պարիսպներից ներս, պատրիարքարանին կից վանքի ընդարձակ ագարակում, որը Բ դարում ծառայել է որպես բանակատեղի հռոմեական բանակին, խանդավառ մթնոլորտում և հանդիսավոր իրադրության մեջ, եկեղեցական արարողությամբ և ամեն. **տ. Եղիշե սրբազան պատրիարք** հոր նախազանգությամբ, կատարվել է հիմնարկերը Ժառանգավորաց վարժարանի նոր շենքի:



Տ. Եղիշե սրբազան պատրիարքը և պրն. Ալեքս Մանուկյանը ժառանգավորաց վարժարանի վեմ-բարի մոտ

Հանդիսությանը ներկա է եղել Հ. Բ. Ը. Միության մեծահարգ նախագահ և հանրածանոթ ազգային մեծ բարերար պրն. **Ալեքս Մանուկյանը**՝ իր շնորհալի տիկնոջ՝ տիկին Մարիի հետ: Պրն. Ալեքս Մանուկյանին ողբեցում էին Ստեփան Տեր-Մկրտչյանն ու իրավաբան Հակոբ Տերտերյանը՝ ԱՄՆ-ից:

**Պրն. Ալեքս Մանուկյանը** Երուսաղեմի հայոց վանքի ժառանգավորաց նոր վարժարանի շինության համար կատարել է 450000 դոլլարի իշխանական նվիրատվություն, այսպիսով իր անունը անմահացնելով և փառավորելով ս. Հակոբյանց վանքի և ժառանգավորաց վարժարանի վերջին շրջանի մեծա-



Տ. ԵՂԻՇԵ ՍՐԲԱՆՔԱՆ ՊԱՏԻՈՒԱՐԻԸ ԵՎ ՊՐՆ. ԱԼԵԿՍ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ ՀՅՈՒՆՈՒ ՀԵՏ ԵՐՈՍՏՐՆԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏԻՈՒՄՔԱԿԱՆ ԴԱՂՇԻՄՈՒՄ

նուն այլ բարերարների, այդ թվում՝ **Կարապետ և Գրիգոր Մելքոնյան** եղբայրների, **Պատրիկ և Գաղուստ Կյուպեկյանների** շարքում:

«Երանի որ ունիցի յիշատակ ի Սիոն», «և յիշատակ քո մնացել» (Եսայ. ԻՁ 16):

Պրն. Ալեքս Սանուկյանի նվիրատվությամբ կառուցվող Ժառանգավորաց նոր վարժարանի շենքը նախատեսվում է 200 գիշերօթիկ աշակերտների համար, աշակերտներ, որոնք ընտրվելու են հիմնականում Ստամբուլի և Թուրքիայի ներքին գավառների հայ ընտանիքների թուրքախոս երեխաներից:

Նոր շենքը բաղկանալու է, ըստ ճարտարապետական նախագծի, երեք առանձին կառույցներից. ննջարան, Ժառանգավորաց վարժարան և լսարան-սրահ՝ 800 հրավիրյալների համար:

Նոր շենքի ներքին հարկը նախատեսվում է որպես ձեռագրաց մատենադարան, որ փոխադրվելու են ս. Թորոս եկեղեցում պահված ս. Հակոբյանց վանքի 4000 արժեքավոր ձեռագրերը: Ժառանգավորաց վարժարանի հին շենքը, որը նույնպես գեղեցիկ, խաչածև, հայկական ճարտարապետական ոճով շինված մի կառույց է, կվերածվի թանգարանի, եկեղեցական արվեստի և հայ մանրանկարչության ընտրելագույն ցուցանմուշներով:

Ժառանգավորաց վարժարանի նոր շենքը պատրաստ կլինի 1972—1973 ուսումնական տարվա սկզբին:

**«Ամրացնենք ու անշարժ և շեն պահենք այս սուրբ Աթոռը, — պատգամում է Հայոց Հայրապետը Իր սրբատառ վերոհիշյալ կոնդակում, — մեր լուսարևակ նախնիք և բաջակորով Հայրապետները, երբե՞ն իրենց կյանքի իսկ գնով, պահպանած են տիրաբար ու ծաղկյալ պահած, մեզի՝ աչօրվաններուս թող լով սրբազան ժառանգություն մը, որ բոլորիս համար ունի հոգևոր և ազգային անփոխարինելի նշանակություն, հայ եկեղեցվո միջազգային դիրքին և իրավունքներուն համար»:**

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը, հանուն մեր եկեղեցու և ճողավըրդի, սրտագին շնորհակալություն և երախտագիտություն է հայտնում մեծասիրտ բարերարին՝ պրն. Ալեքս Սանուկյանին՝ իշխանական իր նվիրատվության համար, և իր ջերմագին խնդակցությունն է բերում Երուսաղեմի հայոց սրբազան պատրիարքին և ս. Հակոբյանց միաբանությանը, Ժառանգավորաց վարժարանի նոր շենքի կառուցման բարեբաստիկ առիթով՝ մաղթելով որ այդ նոր հոգևոր-կրթական հաստատության հովանու ներքո Տերը հասցնի իր Աչո՛ւ՝ հայ եկեղեցու հոգևոր սպասին ու ծառայության համար իր կոչման և առաքելության բարձրության վրա գտնվող հավատավոր ու արժանավոր հոգևորականներ, «մշակք ստանց ամօթոյ»:

